Մարզի համայնքներում աղբահանության, սանմաքրման և բարեկարգման աշխատանքների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական, կրթության, մշակույթի և սպորտի զարգացման, գիտատեխնիկական առաջընթացի հետ զուգահեռ մեծ ուշադրություն է դարձվում բնապահպանական, սանիտարական, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներին:

Տավուշի մարզպետի 15.11.2010թ. թիվ 75-Ա կարգադրությամբ ստեղծվել է սանմաքրման և աղբահանության աշխատանքները համակարգող մարզային հանձնաժողով:

Հանձնաժողովը պարբերաբար կատարում է ուսումնասիրություններ, որի արդյունքում հայտնաբերված և արձանագրված թերությունները վերացնելու նպատակով մարզպետի մոտ հրավիրված խորհրդակցություններում դրանք քննարկվում, կազմվում են միջոցառումների պլան, տրվում են հասցեական հանձնարարականներ, սահմանվում ժամկետներ, գրություններ են ուղարկվում համայնքապետերին և համապատասխան տարածքը սպասարկող ճանապարհաշինարարներին:

Իրականացված հետևողական աշխատանքների շնորհիվ բավականաչափ բարելավվել է համայնքների և համայնքների տարածքներով անցնող ավտոճանապարհների ու նրանց հարակից տարածքների սանիտարական վիճակը: Ասվածը վերաբերվում է մարզի բոլոր համայնքներին: Բայց հարկ եմ համարում նշել Դիլիջան, Իջևան, Բերդ, Հաղարծին, Բաղանիս, Ջուջևան, Հաղթանակ, Պտղավան, Ազատամուտ, համայնքների կատարած առավել դրական աշխատանքը:

Սանմաքրման աշխատանքների կազմակերպման գործընթացում քաղաքային համայնքներում արմատավորվել է մի արատավոր երևույթ, երբ ուշադրությունը սևեռվում է կենտրոնական փողոցների մաքրության ապահովմանը՝ աչքաթող անելով համայնքի ծայրամասային փողոցները: Հարցը քննարկման առարկա է դարձել նաև անցյալ տարվա մարզխորհրդի նիստում, սակայն խնդրին դարձյալ բավականաչափ ուշադրություն չի դարձվել:

Մարզի միջպետական, հանրապետական և միջհամայնքային նշանակության ավտոճանապարհներին հարող տարածքների մաքրության պահպանման աշխատանքները ր ճանշին կազմակերպությունները պարտավոր են իրականացնել ամենօրյա գրաֆիկով:

Կատարված ուսումնասիրություններից հանգում ես եզրակացության, որ ավելի նպատակահարմար և քիչ ծախսատար է վերացնել թերություններն առաջացնող պատճառները, քան հետևանքները: Այս ամենին զուգահեռ անհրաժեշտ է, որ տեղական ինքնակառավարման մարմինները և համապատասխան կազմակերպությունները մշտական ուշադրության կենտրոնում պահեն բնակչության շրջանում համայնքների սանիտարական մաքրման ուղղությամբ տարվող քարոզչական և կանխարգելիչ աշխատանքները թե՛ պետական և թե՛

մասնավոր սեկտորների ոլորտներում՝ նրանց գիտակցության մեջ արմատավորելով ''մեկ համայնք-մեկ տուն'' սկզբունքը:

Նշվածի վառ օրինակներ են Աղստև գետի Իջևանի հատվածը, Գետահովիտ գյուղ տանող խաչմերուկը և գյուղի վերևի հատվածը, Ենոքավան գյուղ տանող ճանապարհի նախկին հացի գործարանին կից տարածքը, Լուսաձորի խաչմերուկի դիմացի լանջը և այլն:

2016թ. ապրիլի 1-30 մարզում կհայտարարվի սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակ:

Առաջարկվում է համայնքների ղեկավարներին միամսյակը կազմակերպված և արդյունավետ անցկացնելու նպատակով նախապատրաստել անհրաժեշտ միջոցներ՝ գործիքներ, տնկիներ, աշխատանքներին ներգրավելով բնակչության լայն խավերին ու դպրոցականների:

Սանիտարական մաքրման աշխատանքներն ու շրջակա միջավայրի պահպանությունը բոլորիս խնդիրն է, այն պետք է կրի շարունակական բնույթ և գտնվի բոլորիս մշտական ուշադրության կենտրոնում:

Քաղաքաշինության վարչության

գլխավոր մասնագետ Մ. Ղալումյան